ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ,ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ՝ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԽՈՐԱՑՎԱԾ ԻՄԱՑՈՒԹՅԱՄԲԵՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏ Ա. ԲԱԼՈՒՅԱՆԻ ՀԵՏ:

Ինչու՞ ընտրությունը կանգ առավ այս մասնագիտության վրա:

-Ամենապահանջված մասնագիտությունն է եղել և կա, այդ իսկ պատճառով երկար չեմ մտածել ու ընտրել եմ այս ոլորտը:

Արդյո՞ք կրթական հաստատության կողմից տրված գիտելիքները բավարար են ոլորտ մուտք գործելու համար:

-Այո, ինձ համար բավարար են եղել:

Որո՞նք են այն առանցքային հմտությունները, որոնք օգնել են և արժեքավոր են եղել աշխատանքային բնագավառում:

-Այն ամենը ինչ սովորել եմ շատ կարևոր են եղել՝ օգնելով աշխատանքի ընթացքում:

Ո՞րն է եղել այն հիշարժան նախագիծը, լավագույն փորձը, որը տպավորվել է ուսանելու տարիներին:

-Հիշարժաններից է այն, որ կազմում էինք տուր փաթեթներ և իրականացնում մեր կազմած երթուղիները:

Որպես գործատու կազմակերպության ներկայացուցիչ՝ կարո՞ղ ենք արձանագրել, որ ոլորտային հմտությունները և գիտելիքները հիմնային են ոլորտում կայանալու համար, քանի որ այժմ դուք նաև աշխատում եք ԿՏՊՔ-ում՝ փոխանցելով Ձեզ տրված լավագույն փորձը ուսանողներին:

-Վստահ կարող եմ ասել, որ ԿՏՊՔ-ն տալիս է լիարժեք գիտելիքներ՝ զբոսաշրջային ոլորտ մուտք գործելու համար:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ՝ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԽՈՐԱՑՎԱԾ ԻՄԱՑՈՒԹՅԱՄԲ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ՇՐՋԱՆԱՎԱՐՏ Ս. ՎԱՐԱԳՅԱՆԻ ՀԵՏ:



Ինչու՞ ընտրությունը կանգ առավ այս մասնագիտության վրա:

-Զբոսաշրջությունը միշտ հետաքրքրել է իր առանձնահատկություններով.փաստերից առաջինը, որը կարող եմ առանձնացնել, այն է, որ իմ երկիրը բացահայտելու եմ աշխարհի համար, երկրորդը՝ շփվելու եմ տարբեր ու տարաբնույթ բնավորություն ունեցող մարդկանց հետ, և կարևորը, թերևս ինձ համար, այս մասնագիտության շնորհիվ փոխվում է ողջ աշխարհայացքս:

Արդյո՞ք կրթական հաստատության կողմից տրված գիտելիքները բավարար են ոլորտ մուտք գործելու համար:

-Կրթական հաստատությունը, միանշանակ, իր հիմքերը թողնում է՝ դառնալով շարժառիթ, մոտիվացիայի աղբյուր՝ առաջ գնալու և մասնագիտությանդ մեջ վստահ քայլեր անելու և արդյունքում էլ առաջիններից մեկը դառնալու համար:

Որո՞նք են այն առանցքային հմտությունները, որոնք օգնել են և արժեքավոր են եղել աշխատանքային բնագավառում: - Յուրաքանչյուր զբոսավար, կարծում եմ, արդեն իսկ պետք է առաջին հերթին տիրապետի հաղորդակցման հմտություններին և, իհարկե, լինի ժպտերես: Որպես առանցքային հմտություններ՝ կարող եմ նշել, որ պետք է լինի էնտուզիազմով լեցուն, ինքնավստահ, պրոակտիվ, ճկուն, խելացի և ամենակարևորը՝ ազգային դիմագծի կրող:

Ո՞րն է եղել այն հիշարժան նախագիծը, լավագույն փորձը, որը տպավորվել է ուսանելու տարիներին:

-Քոլեջը խորքային հիմքեր է թողել իմ մասնագիտական ուղում. որպես հետաքրքիր նախագիծ՝ կարող եմ նշել գործնական առաջադրանքները, որոնք ,կարծում եմ, էլ ավելի տպավորիչ և պրոդուկտիվ են ծառայել (օր՝. ինքնուրույն տուր փաթեթ կազմելը և իրականացնելը): Քոլեջը, ունենալով տարբեր համագործակցություններ, ինձ հնարավորություն է ընձեռել մասնակցելու լավագույն աշկերտ մրցույթին, որը յուրահատուկ և հիշվող նախագիծ է յուրաքանչյուր ուսանողի համար:

Պահպանելով կապը կրթական հաստատության հետ՝ ինչպիսի՞ նախաձեռնություններ,ծրագրեր եք իրականացրել ուսանողների համար:

-Աշխատելով հենց իմ մասնագիտական ոլորտում՝ փորձում եմ կիսվել իմ փորձով ուսանողների հետ՝ ներգրավելով տարբեր ծրագրերի և սեմինարների: Ինչու ոչ՝ նաև իրականացվել են ոչ թեմատիկ նախագծեր այլ մասնագիտություն ունեցող ուսանողների հետ (օր.՝ բնապահպանական): Համագործակցությունները ուսանողների հետ կրելու են շարունակական բնույթ:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ:

Ինչպե՞ս որոշեցիք ընտրել «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությունը:

-Դպրոցն ավարտելուց հետո ունեի 2 ընտրություն՝ ուսումս շարունակել ավագ դպրոցում կամ քոլեջում: Նախընտրեցի քոլեջը, որովհետև ցանկանում էի ունենալ մասնագիտություն: Բացի այդ, քոլեջը հնարավորություն էր տալիս ԲՈՒՀ ընդունվել առավել պարզեցված կարգով:

Մասնագիտական ոլորտում ունենալով համապատասխան փորձառություն՝ ինչպե՞ս կգնահատեք կրթական հաստատության պրակտիկ ներդրումը:

-Կրթական հաստատությունն ինձ տվել է հիմնային գիտելիքներ, ինչի շնորհիվ քոլեջն ավարտելուց հետո կարողացա արագ անցնել աշխատանքի:

Որո՞նք են եղել առանցքային հմտությունները, որոնք արժեքավոր են եղել Ձեր մասնագիտական ուղում:

-Քոլեջում ստացել եմ խորը և առանցքային գիտելիքներ, ձեռք եմ բերել համապատասխան հմտություններ և

կարողություններ, ինչն էլ հնարավորություն է տվել աշխատանքի մեջ հմտանալ՝ խորացնելով մասնագիտական փորձս:

Որքանո՞վ է կրթական հաստատությունը կարողանում պատրաստել աշխատաշուկայի կարիքներին համապատասխան մասնագետ:

-Կրթական հաստատության տված գիտելիքները այնքան խորը և համակողմանի են, որ յուրաքանչյուր շրջանավարտ կկարողանա իր տեղը գտնել աշխատաշուկայում:

-Ձեր խորհուրդը ապագա մասնագետին:

Սովորիր սիրով և միանշանակ կգտնես քո տեղն աշխարհում:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ և ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀԵՏ:

Ինչպե՞ս ընտրություն կատարեցիք մասնագիտության հարցում՝ հիմնվելով նախասիրության, թե՞ մասնագիտության պահանջարկի վրա:

-Հիմնվելով նախասիրության վրա՝ կատարել եմ մասնագիտության ընտրությունը, քանի որ պահանջարկ վայելող մասնագիտությունները միշտ չէ, որ համապատասխանում են մեր ներքին ձգտումներին:

Որպես սկսնակ մասնագետ՝ հաստատության կողմից տրված հիմնային կարողությունները բավարար են աշխատաշուկայում առաջին քայլերը իրականացնելու համար՝ համատեղելով ինքնակրթության հետ:

-Որպես սկսնակ մասնագետ՝ բավարար են, սակայն ոլորտը այնպիսինն է, որ առանց ինքնակրթության առաջ գնալ և զարգանալ հնարավոր չէ:

Որո՞նք են մասնագիտության ուժեղ կողմերը:

-Հնարավորություն է տալիս ձևավորել ճկուն մտածելակերպ, արագ կողմնորոշվել համապատասխան իրավիճակներում՝ զարգացնելով խնդրին ճիշտ լուծումներ տալու ունակությունը:

Ձեր խորհուրդը ապագա մասնագետին:

-Շարժվել առաջ՝ չմոռանալով զբաղվել ինքնակատարելագործմամբ:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ՔՈՒՅՐԱԿԱՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ՀԵՏ

Ինչպե՞ս որոշեցիք ընտրել մասնագիտությունը:

Որպես մանկության երազանք՝ ի սկզբանե նախընտրել եմ լրագրողի մասնագիտությունը: Բայց մինչև լրագրող դառնալը որոշեցի սովորել մեկ այլ մասնագիտություն՝ ավագ դպրոց գնալու փոխարեն, որը հետագայում պիտանի կլինի թե ինձ, թե հասարակությանը, թե ընտանիքիս: ԿՏՊՔ-ում բուժքրոջ մասնագիտությունը սովորելու ընթացքում հասկացա, որ գնալով հետաքրքրությունս մեծանում է մասնագիտության հանդեպ՝ հստակ որոշելով, որ առաքելությունս պետք է շարունակեմ միայն բժշկական ոլորտում:

Ո՞րն է այն արժեքավոր փորձառությունը, որը ստացել եք հաստատությունում ուսանելու տարիներին:

Քոլեջի համագործակցությունը այլ հաստատությունների հետ ինձ հնարավորություն է տվել մասնակցելու «Մրցունակ աշակերտ» նախագծին, ինչպես նաև կազմակերպել է բազմաբովանդակ պրակտիկա

Հրազդան ԲԿ-ում՝ ձեռքբերելով փորձառություն, որն օգնում է աշխատանքում:

Որքանո՞վ է ստացված գիտելիքը օգնել աշխատանքում:

Բուժքրոջ մասնագիտությունը այն մասնագիտություններից է, որ անընդհատ պետք է ինքնակրթվել, ինքնազարգանալ, կատարելագործվել՝ ավելացնելով գիտելիքներդ: Թվարկվածները ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ամուր հիմք: Ես ստացել եմ այդ ամուր հիմքը ԿՏՊՔ-ում սովորելու տարիներին:

Դասախոսական անձնակազմի կողմից տրված հիմքի, կառուցվածքի վրա այժմ շարունակում եմ ավելացնել գիտելիքներս, հղկելով և ձևավորելով մասնագիտական ուղիս՝ շարունակում եմ գրանցել նոր առաջխաղացումներ ինչպես աշխատանքում, այնպես էլ առօրյա կյանքում:

Ստացված հմտությունը, կարողությունը հնարավորություն տալի՞ս է շուկայում լինել մրցունակ:

Իհարկե, ստացած հմտություններն ու կարողությունները տալիս են մեծ հնարավորություններ, աշխատանքի բազմաթիվ առաջարկներ, որը կարող եմ հաստատել իմ փորձով :

Ո՞րն է մասնագիտության ուժեղ կողմը:

Շուկայում մշտական պահանջարկն ու արդիականությունը մասնագիտության առանցքային ուժեղ կողմն է: Վերջին տարիներին պանդեմիայի և մեր երկրում տեղի ունեցած պատերազմի ընթացքում կարծում եմ՝ բոլորս համոզվեցինք, թե որքան կարևոր է բուժաշխատողի մասնագիտության դերը հասարակության համար: